

**ԲԱՆԱՍՏԵՂԾԱԿԱՆ****ՎԱՆՔԸ՝ ԶԱՏԻԿԻՆ**

Հոգեստո՛ւն, վանքը Զատիկի այս օրերուն  
 Հաւատարժարժ՝ կը թրթրուայ հոն ամէն բան  
 Վաղընչական կամարներուն տակ, ուր անհուն  
 Երանութեամբ լեցուած սիրտեր ի ծունր կու գան

Զահաւորեալ հին հաւատքովն իմ պապերուս,  
 Որ սրբաշող այս երկինքի կապոյտին տակ  
 Խոնարհեցան, բայց կանգնեցան ալ ուս ընդ ուս,  
 Յաւերժական, անշէջ լոյսին իբրեւ պահակ:

Սրբատո՛ւն է վանքը Զատիկի այս օրերուն,  
 Ուր հաւատքի կ'եռայ կաթսան միւռոնաշիթ,  
 Մինչ յարութեան յուսապատար երգն օրօրուն

Անմահութեան կը նշուէ յոյս ու ժպիտ  
 Ուխտաւորեալ հոգիներուն հաւատազէն,  
 Որ երկնատենչ արբեցութեամբ՝ հո՛ն կ'երազե՛ն...:

**ՀՄԱՅՆԱԿ ԳՐԱՆԵԱՆ**

(Զամ-Թաղ, 20 Ապրիլ, 1908)

